

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառուցվածքային ստորաբաժանում:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, սույն Կանոնադրությամբ, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում տեսչական մարմնի ղեկավարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրն է՝ շուկայում ոչ պարենային արտադրանքի ուսումնասիրությունների (դիտարկումների) իրականացումը, Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը և վերահսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության հիմնական գործառույթներն են՝

1) ապահովում է շուկայում ոչ պարենային արտադրանքի ուսումնասիրությունների (դիտարկումների) իրականացումը,

2) ապահովում է Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում գործող տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը,

3) տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման նպատակով ³ձՅՆԱՅԾՍ չ ոլորտային և անհատական ռիսկերի միավորների հանրագումարի հաշվարկումը,

4) ապահովում է տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը,

5) ստուգումների պլանավորման միջոցով ապահովում է Տեսչական մարմնի վերահսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներն ու տնտեսավարող սուբյեկտները,

6) ապահովում է ոչ պարենային արտադրանքի և պատական չափագիտական վերահսկողության բնագավառներում ռիսկի կառավարման (գնահատման) մեթոդաբանության մշակումը, անհևաժեշտության դեպքում դրա վերանայումը,

7) ապահովում և կազմակերպում է ոչ պարենային արտադրանքի և պատական չափագիտական վերահսկողության բնագավառներում տեղեկատվության փոխանակումը Տեսչական մարմնի ստորաբաժանումների և շահագրգիռ պետական մարմինների միջև.

8) ապահովում է ոչ պարենային արտադրանքի և պատական չափագիտական վերահսկողության բնագավառներում ռիսկերի գնահատման արդյունքների ուսումնասիրությունը և վերլուծությունը,

9) ապահովում է ոչ պարենային արտադրանքի և պատական չափագիտական վերահսկողության բնագավառներում ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա Տեսչական մարմնի ստուգումների իրականացման տարեկան ծրագրի կազմումը և պարբերաբար հետևումը դրա իրականացմանը,

10) Վարչության լիազորությունների շրջանակներում հաշվետվությունների, առաջարկությունների և տեղեկանքների նախապատրաստում,

11) Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ Վարչությունն իրականացնում է նաև կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

IV.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը:

7. Վարչության պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները,

2) կատարում է Տեսչական մարմնի ղեկավարի կողմից իր լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

8. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը:

9. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում է Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից: